ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016 թվականի թիվ 130 քաղ. Մոսկվա

Մեծ տրամագծով խողովակները գործարանային եռաշերտ հակաքայքայիչ պատվածքով պատելու համար պոլիէթիլենի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը սահմանելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 42-րդ եւ 45-րդ հոդվածներին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 4-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Սահմանել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3901 20 900 1 ծածկագրով դասակարգվող՝ մեծ տրամագծով խողովակները գործարանային եռաշերտ հակաքայքայիչ պատվածքով պատելու համար պոլիէթիլենի նկատմամբ՝ մաքսային արժեքի

0 տոկոսի չափով՝ 2017 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Մաքսային միության միասնական մաքսային սակագնում (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) ՄՄ ԱՏԳ ԱԱ 3901 99 500 1 ծածկագրով դիրքի չորրորդ վանդակը լրացնել «5Դ» ծանոթագրությանը կատարվող հղմամբ:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից, սակայն ոչ շուտ, քան դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Ա. Մամին	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով